«ՄՏԱԾՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ - ՈՒԺԵՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

Հանրապետական ամենամյա գիտաժողով երիտասարդ հետազոտողների համար

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղը կազմակերպում է **«Մտածող երիտասարդություն-ուժեղ տնտեսություն»** խորագրով ամենամյա հանրապետական գիտաժողով երիտասարդ հետազոտողների համար:

Գիտաժողովին կարող են մասնակցել ուսանողներ, ասպիրանտներ, հայցորդներ և մինչև 35 տարեկան երիտասարդ հետազոտողներ ՀՀ բուհերից և գիտահետազոտական հաստատություններից:

Գիտաժողովը տեղի կունենա **2024թ մայիսի 17-ին** ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում:

Գիտաժողովն անցկացվելու է հետևյալ թեմատիկ ուղղություններով՝

-տնտեսության թվային փոխակերպումներ ու արհեստական բանականություն

-թվայնացման հնարավոր ազդեցությունը աշխատաշուկայի վրա

-արհեստական բանականության և զարգացող տեխնոլոգիաների տնտեսական հետևանքները

-ֆինանսական շուկայի զարգացման նոր ուղղությունները թվային փոխակերպման համատեքստում,

-թվայնացման ազդեցությունը համաշխարհային տնտեսության զարգացման օրինաչափությունների վրա

-զբոսաշրջության ոլորտի առկա հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները

Գիտաժողովի ընթացքում լավագույն զեկույց և հոդված ներկայացնող ուսանողները կպարգևագրվեն հատուկ մրցանակներով, իսկ լավագույն հոդվածները կտպագրվեն ՀՊՏՀ ԳՄ գիտական պարբերականի հերթական համարում:

Զեկուցումների առավելագույն տևողությունը 15 րոպե է:

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **2024թ մայիսի 5-ը** լրացնել մասնակցության հայտը և մինչև մայիսի 31-ը ուղարկել հոդվածի վերջնական տարբերակը:

Հոդվածին ներկայացվող տեխնիկական պահանջները

1. Հոդվածները ներկայացնել Word տարբերակով հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներից որևէ մեկով:
2. Թուղթը՝A4 ֆորմատ, գրքային:
3. Լուսանցքները՝ վերևից, աջից, ձախից, ներքևից 1 սմ:
4. Տառաչափը՝ 12:
5. Տառատեսակը՝ GHEA Grapalat:
6. Միջտողային հեռավորությունը՝ 1,5:
7. Հեղինակ(ներ)ի անուն, ազգանուն՝ բնագրի լեզվով, առաջին տողում, հավասարեցումը աջից, թավ:

8. Գիտական ղեկավարի անուն, ազգանուն, գիտական աստիճան, կոչում՝ երկրորդ տողում, հավասարեցումը աջից, թավ:
9. Աշխատանքի վերնագիրը՝ բնագրի լեզվով, գլխատառերով, երրորդ տողում, հավասարեցումը կենտրոնից, թավ:
10. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել աշխատանքի հակիրճ բնութագիրը (անոտացիա) բնագրի լեզվով, հավասարեցումը երկկողմանի, շեղատառ:
11. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել աշխատանքի հիմնաբառերը՝ բնագրի լեզվով ՝ մինչև 10 բառ, հավասարեցումը երկկողմանի, շեղատառ:
12. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել հոդվածի հիմնական բովանդակությունը:
13. Հղումները՝ տողատակում.աղբյուրի հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր, տարեթիվ և էջ:
14. Աղյուսակները և գծապատկերները պետք է վերնագրվեն և համարակալվեն, ունենան համապատասխան հղում:
15. Հոդվածի վերջում՝ օգտագործվծա գրականության ցանկ:
16. Հոդվածի ծավալը՝ 8-10 էջի սահմանում, բոլոր էջերը պետք է համարակալվեն ներքևից՝ աջ կողմում:

Գիտաժողովի բոլոր զեկուցողներին տրվելու են մասնակցության հավաստագրեր*:*

Հարցերի դեպքում կարող եք գրել *spf.asuegb@gmail.com* էլ հասցեին կամ զանգահարել *+37494199938* հեռախոսահամարով *(*Հետազոտությունների և զարգացման բաժին*,* ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ*):*